

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴԻՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՇՄՆ-ԴՇ-26/02**

ք.Երևան

« 04 » « 02 » 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Աթանեսյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Հիդրոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Լ.Ազիզյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» №1910-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Հիդրոդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում» ծրագրային միջոցառման՝ բաժին 05, խումբ 06, դաս 01, ծրագիր 1016, միջոցառում 11004 (այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև 1 650 941 000 (մեկ միլիարդ վեց հարյուր հիսուն միլիոն ինը հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ գումարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2. Ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի Հավելված N*1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 2.1. **Պետական մարմինն իրավունք ունի՝**
 - 2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
 - 2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.
 - 2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - ա) կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - բ) կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
 - գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.
 - 2.1.4. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:
- 2.2. **Կազմակերպությունն իրավունք ունի՝**
 - 2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.
 - 2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:
- 2.3. **Պետական մարմինը պարտավոր է՝**
 - 2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.
 - 2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.
 - 2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.
 - 2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:
- 2.4. **Կազմակերպությունը պարտավոր է՝**
 - 2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.
 - 2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.
 - 2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.



- 2.4.4. Պետական մարմինն ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն:
- 2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:
- 2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը, Պայմանագրի արդյունքների հանձնման և ընդունման կարգը

- 3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
- 3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
- 3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
- 3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
- 3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:
- 3.6. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կազմակերպության միջև երկկողմ ստորագրված և հաստատված փաստաթղթով՝ հանձնման-ընդունման արձանագրությամբ (Հավելված N°3), նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
 Պայմանագրի 2.4.4 կետով նախատեսված ժամկետում Կազմակերպությունը իրականացված միջոցառումների հաշվետվության հետ Պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:
- 3.7. Հանձնման-ընդունման արձանագրությունը Պետական մարմնի կողմից ստորագրվում է, եթե Պայմանագրի արդյունքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և հաստատվում: Նման դեպքում Պետական մարմինը՝
 - ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները:
 - բ) Կազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
- 3.8. Պետական մարմինը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպությանն է ներկայացնում իր կողմից ստորագրված և հաստատված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Պայմանագրի արդյունքները չընդունելու պատճառաբանված մերժումը:
- 3.9. Եթե Պայմանագրի 3.8 կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա Պայմանագրի արդյունքը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.8 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված և հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. Վճարման կարգը և ժամկետները

- 4.1. Պայմանագրի Հավելված N°2-ով հաստատված, տվյալ եռամսյակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:
- 4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները՝
 - ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով:
 - բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է Պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահմանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով:
 - գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով:



սահմանված կարգով, իսկ ավել իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 20-ը, սակայն ոչ ավելի Պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:

- 4.3. Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ Կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման և Պայմանագրի պահանջների պահպանման համար:
- 5.2. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագրով նախատեսված միջոցառումները սահմանված ժամկետում իրականացնելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում:
- 5.3. Պայմանագրով նախատեսված իրականացման ենթակա միջոցառումների ժամկետը խախտելու, ինչպես նաև Պայմանագրի 2.4.4 կետով նախատեսված հաշվետվությունները սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում յուրաքանչյուր ուշացված օրվա համար Կազմակերպությունից գանձվում է տույժ՝ իրականացման ենթակա, սակայն չիրականացված միջոցառման գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
- 5.4. Պետական մարմինը Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարման ենթակա գումարներից:
- 5.5. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պետական մարմնի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
- 5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

- 6.1. Պայմանագրի պայմանները տարածվում են 2026 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի հաղարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

- 8.1. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով հաստատված արդյունքային (կատարողական) ցուցանիշների եռամսյակային (աճողական) համամասնությունները (Հավելված N°2) հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
- 8.3. Եթե տրամադրվող դրամաշնորհով նախատեսված ծրագիրը և միջոցառումները ենթակա չեն ավելացված արժեքի հարկով հարկման կամ ենթակա են հարկման պետական բյուջեից ավելացված հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2026 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
- 8.4. Կազմակերպությունը մինչև 2027 թվականի հունվարի 31-ը Պետական մարմնին են ներկայացնում տեղեկատվություն 2026 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին ստացված դրամաշնորհի շրջանակներում հաշվարկված և



պետական բյուջե վճարված ԱԱՀ գումարների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե մասին» օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի պահանջներին համապատասխան չօգտագործված և ՀՀ պետական բյուջե վերադարձված գումարների վերաբերյալ:

- 8.5. Պայմանագիրը կազմված է 4 (չորս) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Պայմանագրի Հավելվածներ N№91-ը, 2-ը և 3-ը համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Շրջակա միջավայրի նախարարություն

ք.Երևան, Կառավարական տուն 3
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011035178
ՎՀՀ 02507198

Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար

Ս.Աթանեսյան



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ք.Երևան, Չարենցի 46
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018003815
ՎՀՀ 02825793

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Լ.Ազիզյան



Հավելված N⁰¹
 « 04 » « 02 » 2026թ. կնքված
 N⁰ ՇՄՆ-ԴՇ-26/02 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
 Շրջակա միջավայրի նախարարության
 գլխավոր քարտուղար
Ս. Աթանեսյան



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
 «Հիդրոօդերևութաբանական կայաններ
 մոնիթորինգի կենտրոն» ՊՈՒԿԱՎԻՏՅՈՒՆ

Լ. Ազիզյան

(ստորագրություն)

Լ. Ա.



ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐ

Իրականացվելիք միջոցառման

h/h	անվանումը	համառոտ բովանդակությունը	ավելավոր արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)	
1.	Օդերևութաբանական, հիդրոլոգիական դիտարկումներ և կանխատեսումներ, հեյլիտերկրաֆիզիկական սպրոդերևութաբանական, ռադիոլոգիական դիտարկումներ և ռադիոլոգացիոն մոնիթորինգ	<p>1) Հանրապետության տարածքում մթնոլորտում և գետնի մակերևույթին տեղի ունեցող ֆիզիկական երևույթների ուսումնասիրման նպատակով, Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան, դիտարկումներ են իրականացվելու օդերևութաբանական տարրերի նկատմամբ՝</p> <ul style="list-style-type: none"> 25 ակնադիտական օդերևութաբանական կայաններում լրիվ ծրագրով, Գրինլանդի ժամանակով ժամը 00-ին, 03-ին, 06-ին, 09-ին, 12-ին, 15-ին, 18-ին և 21-ին, իսկ մթնոլորտային երևույթների և եղանակի վիճակի նկատմամբ շուրջօրյա; 50 ավտոմատ օդերևութաբանական կայաններում 10 րոպե նեկ; 24 հիդրոլոգիական դիտակետերում՝ կրճատ ծրագրով (միայն օդի ջերմաստիճանի, տեղումների, մթնոլորտային երևույթների և ձյան բարձրության); <p>2) հեյլիտերկրաֆիզիկական դիտարկումներ՝ ակտիվությունից հետո և օգոնոմետրիական դիտարկումների իրականացում օգոնի ընդհանուր պարունակության չափումներ, 3) 31 գյուղատնտեսական մշակաբույսերի վրա, խոտհարքներում և</p>	<p>Ավտոմատ օդերևութաբանական կայաններում յուրաքանչյուր 10րոպե պարբերականությամբ՝</p> <ul style="list-style-type: none"> 1. օդի ջերմաստիճան՝ <ul style="list-style-type: none"> ա. նվազագույն բ. առավելագույն գ. միջին 2. հողի մակերևույթի ջերմաստիճանի չափում՝ <ul style="list-style-type: none"> ա. նվազագույն բ. առավելագույն գ. միջին • ցողի կետ • հարաբերական խոնավություն • մթնոլորտային ճնշում ա. կայանի բարձրության վրա, բ. ծովի մակարդակին • տեղումների քանակ • քամի՝ <ul style="list-style-type: none"> ա. ուղղություն բ. միջին արագությունը գ. առավելագույն արագությունը • ձյան ծածկի բարձրություն • հողախորքային ջերմաստիճան (20,40,60,80սմ)-43 կայան ա. նվազագույն բ. առավելագույն գ. միջին • հողախորքային խոնավություն (20,40,60,80սմ)-45 կայան ա. նվազագույն բ. առավելագույն գ. միջին • հողախորքային ջերմաստիճան (5,10,15,20,25սմ)-2 կայան • հորիզոնական տեսանելիություն (1 կայան) 	<p>Համաձայն ՀՕԿ-ի կոմպլեքսային, ԱՊՀ միջպետական համաձայնագրերով, սույն ծրագրով ամրագրված, ինչպես նաև երկկողմ պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կանխատեսումների, տեղեկագրերի, տարեգրերի պատրաստում, ծառայությունների մատուցում և համաշխարհային ու տարածաշրջանային կենտրոններին տեղեկատվության հաղորդում, այդ թվում՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ամենօրյա եղանակի փաստացի քարտեզ, 2. ամենօրյա Հիդրոօդերևութաբանական տեղեկագիր, 3. յուրաքանչյուր ամիս ամսական եղանակային պայմանների կանխատեսում, 4. հոկտեմբեր, մարտ ամիսներին սեզոնային եղանակային պայմանների կանխատեսում, 5. յուրաքանչյուր ամիս տեսություններ դիտված եղանակային պայմանների մասին 6. յուրաքանչյուր շաբաթ տեսություններ դիտված և սպասվող երևույթների մասին 7. մայիս-հոկտեմբեր ամիսներին Երևան քաղաքում և մարզկենտրոններում դիտված միջին օրական ջերմաստիճանների տրամադրում ՀՀ առողջապահության նախարարությանը 8. ըստ կանխատեսման Լիազոր մարմնին և ինտերնետ կայքին եղանակի կանխատեսումների և վտանգավոր երևույթների մասին նախազգուշացումների տրամադրում, 9. ամենօրյա Հանրապետության 10 մարզերի համար հիդրոօդերևութաբանական տեղեկագրերի պատրաստում, 10. ամենօրյա Հիդրոօդերևութաբանական սպասվելիք կամ դիտված վտանգավոր երևույթների մասին տեղեկատվության պատրաստում 11. ամենօրյա Հանրային լրատվամիջոցների համար 	31.12.2026թ.	1 242 223 236

	<p>արտավայրերում, ագրոօդերևութաբանական դիտարկումների իրականացում Երևանի մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայանում և օդերևութաբանական ցանցի 38 կայաններում,</p> <p>4) գետերի, երկու ջրանցքի (Արփա-Սևան ջրատար, Հրազդան հիդրոէլեկտրակայանի ջրանցք), 5 խոշոր ջրամբարներում (Արփիճի, Ախուրյանի, Ապարանի, Մարմարիկի, Ազատի) և Սևանա լճում գործող հիդրոլոգիական դիտակետերում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմային դիտարկումներ:</p> <p>5) Մթնոլորտից երկրի մակերևութի վրա տեղացող ռադիոակտիվ փոշու խտության ամենօրյա, օդերևութաբանական կայաններից բերված հողի նմուշների գումարային բետտա-ակտիվություն, ատոմակայանի շրջակայքից (Սևջրից), Արփա և Որոտան գետավազաններից, Սևանա լիճ թափվող գետերից բերված ջրի նմուշներում կոշտ մնացորդների գումարային բետտա-ակտիվության չափումների իրականացում: Բնադիոլոգիական իրավիճակի վերաբերյալ չափումներ՝ 22 կայանում,</p> <p>6) ռադիոլոգիան դիտարկումներ, մթնոլորտային վտանգավոր երևույթների մոնիթորինգ:</p>	<p>• մթնոլորտային երևույթներ (1 կայան) Ակնադիտական օդերևութաբանական կայաններում՝</p> <p>1. շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ օդի ջերմաստիճանի չափում՝ ա. նվազագույն բ. առավելագույն գ. ժամկետային</p> <p>2. շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ հողի մակերևութի ջերմաստիճանի չափում՝ ա. նվազագույն բ. առավելագույն գ. ժամկետային</p> <p>3. շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ հողի ջերմաստիճանը 5, 10, 15, 20 սմ խորությունների վրա,</p> <p>4. տարվա տաք ժամանակաշրջանում՝ յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ, ցուրտ ժամանակաշրջանում՝ օրական 1 անգամ հողի 20, 40, 80(կամ 60), 120 (կամ 100) սմ խորությունների ջերմաստիճանը</p> <p>5. շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ քամի՝ ա. ուղղությունը դիտաժամին բ. միջին արագությունը դիտաժամին գ. առավելագույն արագությունը դիտաժամին դ. առավելագույն պոռթկումը դիտաժամերի միջև,</p> <p>6. շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ տեսանելիության չափումներ,</p> <p>7. շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ ամպամածություն՝ ա. ամպամածության քանակը, բ. ամպերի ձևերը (տեսակները), գ. ամպերի բարձրությունը</p> <p>8. շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ եղանակի բնութագիրը ա. դիտաժամին բ. դիտաժամերի միջև</p> <p>9. շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ դիտված մթնոլորտային երևույթները ա. երևույթի սկիզբը, բ. ավարտը, գ. ինտենսիվությունը</p> <p>10. շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ օդի խոնավությունը՝ ա. հարաբերական խոնավություն, բ. հագեցման պակասորդը, գ. ջրային գոլորշու առածգականությունը, դ. ցողի կետը,</p> <p>11. շուրջօրյա, յուրաքանչյուր 3 ժամը մեկ անգամ մթնոլորտային ճնշումը՝ ա. կայանի բարձրության վրա, բ. ծովի մակարդակի կամ համապատասխան իզոբարական մակերևութի վրա, գ. բարոմետրական տեղեցնի բնույթը և չափը</p> <p>12. օրական շանգամ տեղումների քանակը</p> <p>13. օրական 4 անգամ գոլորշացումը</p> <p>14. ձնածածկույթի՝ ա. բարձրությունը՝ օրական 1 անգամ, բ. շրջապատի ձնածածկվածության աստիճանը՝ օրական 1 անգամ,</p>	<p>կանխատեսումներ և տեսություններ, 12. ամենօրյա Ալրոսինոպտիկական նյութեր և կանխատեսումներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ավիացիայի վարչության համար, 13. ամենօրյա ուլտրամառնալեզույն ճառագայթման ինտենսիվության և գեոմագնիսական դաշտի վիճակի փոփոխությունների գնահատում և կանխատեսում, 14. ամենօրյա Հայաստանի Հանրապետության տարածքում տեղաբաշխված Ռուսաստանի Դաշնության զինված ուժերին հիդրոօդերևութաբանական տեղեկատվությամբ և կանխատեսումներով ապահովում, 15. ըստ երևույթների առկայության շահագրգիռ կազմակերպություններին և ընակչությանը ահազանգում՝ հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների մասին, 16. ամենօրյա Երևանի քաղաքապետարանին հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների մասին տեղեկատվությամբ և կանխատեսումներով ապահովում, 17. ամեն օր և ըստ դիտման փաստի ինտերնետային կայքի ամենօրյա թարմացում դիտված եղանակի վերլուծական նյութերով և կանխատեսումներով, ըստ կանխատեսման՝ եղանակի վտանգավոր երևույթների վերաբերյալ նախազգուշացումների տեղադրում, 18. մայիս, հոկտեմբեր ամիսներին դիտված եղանակի սեզոնային վերլուծությունների տրամադրում Ռուսաստանի Դաշնության հիդրոմետ ծառայության համապատասխան ստորաբաժանումներին և Հարավ արևելյան ու միջերկրածովյան երկրների կլիմայական վերլուծությունների կոնսորցիումին, 19. վեգետացիայի սեզոնին յուրաքանչյուր տասնօրյակ վեգետացիայի ընթացքի վերլուծություններ արքայազնային տվյալների միջոցով, 20. վեգետացիայի սեզոնին յուրաքանչյուր տասնօրյակ ցորենի, խաղողի, կարտոֆիլի ջրապահովվածության գնահատում զարգացման տարբեր փուլերում, 21. ամենօրյա հեռուստատեսության համար 1 օրվա հիդրոօդերևութաբանական կանխատեսման տրամադրում, 22. մարտ ամսին՝ գարնանային վարարումների տարրերի կանխատեսում, 23. հունիս ամսին (ըստ անհրաժեշտության) գարնանային վարարումների տարրերի կանխատեսման ճշգրտում, 24. ամսական՝ գետերի ամսական ելքերի կանխատեսում, 25. տարեկան 1 անգամ վեգետացիոն ժամանակահատվածի գետերի միջին ելքերի կանխատեսում, 26. յուրաքանչյուր եռամսյակ՝ գետերի միջին եռամսյակային ելքերի կանխատեսում, 27. յուրաքանչյուր տասնօրյակ՝ գետերի տասնօրյակային ելքերի կանխատեսում, 28. ամեն օր գետերի միջին օրական ելքերի որակական կանխատեսում, 29. վտանգավոր հիդրոլոգիական երևույթների վերաբերյալ կանխատեսումների և նախազգուշացումների կազմում և թողարկում 30. մարտ ամսին ձնածածկույթի վերաբերյալ տեղեկանք, 31. ամսական և տարեկան Սևանա լճի ջրային հաշվեկշիռը,</p>	
--	---	---	--	--



	<p>գ. խտությունը՝ տասնորյակը մեկ անգամ, դ. ջրի պաշարը՝ տասնորյակը մեկ անգամ, 15. շրջաօդային վտանգավոր մթնոլորտային երևույթների բնութագիրը ա. սկիզբը, բ. ավարտը, գ. ինտենսիվությունը 16. երևույթի առկայության դեպքում ոչ պակաս, քան 1,5 ժամը մեկ անգամ սառցակալումը (մերկասառույց, ջինջառ), ա. սկիզբը, բ. ավարտը, գ. ինտենսիվությունը 17. ըստ տևողության՝ 1-3 անգամ արևափայլի տևողությունը, 18. օրական 1 անգամ հողի մակերևույթի վիճակը 19. ըստ երևույթի առկայության ա. յուրաքանչյուր աշխատանքային օր</p> <ul style="list-style-type: none"> • Եղանակի սպասվելիք վտանգավոր երևույթների (որոնք կարող են բերել արտակարգ իրավիճակների կամ հասցնել զգալի վնասներ) դիտման ժամանակի վերաբերյալ կանխատեսումներ և նախագուշակումներ • Ամենօրյա տեղեկագրեր նախորդ օրը դիտված եղանակի նկարագրությամբ և 1-5 օրերի եղանակի կանխատեսումով մարզերի և Երևան քաղաքի համար • Կանխատեսում 1 օրվա և 2-3 օրերի վաղորդությամբ՝ միջազգային փոխանակության համար (ուղարկվում է համաշխարհային և տարածաշրջանային կենտրոններ), <p>Բ. Յուրաքանչյուր ամիս՝</p> <ul style="list-style-type: none"> • Ամսական կլիմայական բնութագրերի, ամսական և սեզոնային կանխատեսումների կազմում: <p>20. Հեյլոտերկրաֆիզիկական, այդ թվում՝ ա. Ավտինոմետրիական շրջաօդային դիտարկումների իրականացում 2 կայաններում (Երևան, Մարտունի)՝ օրվա ցերեկային ժամերին՝ 3 ժամը մեկ անգամ (Գրինվիչի ժամանակով ժամը 06.30, 09.30, 12.30, 15.30, 18.30), գիշերային ժամերին՝ մեկ անգամ (Գրինվիչի ժամանակով ժամը 21.30-ին), արեգակի և երկրի ճառագայթման հաշվեկշիռի բաղադրիչների վերաբերյալ՝ ուղիղ ճառագայթման, ցրված ճառագայթման, անդրադարձված ճառագայթման, գումարային ճառագայթման հաշվեկշիռի, մակերևույթի ալբեդոյի ուսումնասիրման նպատակով: Բ. օգնոմետրիական դիտարկումների իրականացում օգնի ընդհանուր պարունակության չափումներ՝ պարզ երկնքի դեպքում, յուրաքանչյուր ժամը մեկ Գրինվիչի ժամանակով ժամը 07.00-ից մինչև ժամը 10.00, Ամբերդ կայանում օրվա ցերեկային ժամերին պարզ երկնքի դեպքում՝ 3-5 անգամ: 21. Ազոտդերևութաբանական դիտարկումների իրականացում օդերևութաբանական ցանցի 39 կայաններում՝ 31 գյուղատնտեսական մշակաբույսերի վրա, խոտհարքներում և արոտավայրերում. Ա. ՎԵԳԵՏԱՑԻՈՆ ՇՐՋԱՆՈՒՄ</p> <ul style="list-style-type: none"> • 2 օրը մեկ անգամ բույսերի զարգացման փուլերի որոշում, 39 կայան • 10 օրը մեկ անգամ բույսերի բարձրության որոշում, 19 	<p>32. ամենօրյա Սևանա լճի մակարդակը. 33. ամենօրյա գետերի մակարդակի և ելքի տվյալներ. 34. պարբերաբար, հունիս-սեպտեմբեր ամիսներին Հրազդան-Հրազդան, Հրազդան-Արզել, Ազատ-Գառնի, Արփա-Ջերմուկ, հիդրոլոգիական դիտակետերում ջրի ելքի հաճախականացված չափումներ. 35. ամենօրյա, ըստ բացթողումների գրաֆիկի Սևանա լճից բաց թողնված ջրի քանակի վերաբերյալ տվյալներ. 36. ապրիլ, հունիս, սեպտեմբեր Սևանա լճի մակարդակի (վարարումների ընթացքում, դեկտեմբերի 31-ի դրությամբ) կանխատեսում. 37. մայիս-հոկտեմբեր ամիսներին դիտված հեղեղումների տվյալների մշակում. 38. առաջին կիսամյակում գետերի հունային դեֆորմացիաների ուսումնասիրություններ. 39. տարեկան՝ գարնանային վարարումների բնութագրերի որոշում 40. տարեկան՝ հիմնական հիդրոլոգիական բնութագրիչների հաշվարկում 41. 1 անգամ, գարնանը աշնանացան ցորենի վեգետացիայի սկզբին լեռնային շրջաններում խոնավության պաշարների կանխատեսում 42. 1 անգամ, գարուն-ամառ ժամանակահատվածում աշնանացան ցորենի մոմային հասունացման ժամկետների կանխատեսում 43. 1 անգամ ամռանը լեռնային շրջաններում, աշնանացան ցորենի միջին հանրապետական կանխատեսում հասկալալման փուլում 44. հացահատիկային մշակաբույսերի միջին բերքատվության կանխատեսում՝ ա.վեգետացիայի վերսկսման ժամանակ 1 անգամ գարնանը բ.ցորունակալման ժամանակ 1 անգամ գարնանը գ.հասկալալման ժամանակ 1 անգամ գարուն-ամառ ժամանակահատվածում 45. 1 անգամ գարնանը տեղեկանք հովտային շրջաններում վաղահաս կարտոֆիլի ցանքի ժամկետների վերաբերյալ 46. 1 անգամ գարնանը կարտոֆիլի միջին հանրապետական բերքատվության կանխատեսում 47. 1 անգամ, գարնանը տեղեկանք ջերմասեր մշակաբույսերի ցանքի ժամկետների մասին՝ Արարատյան դաշտում և նախալեռնային շրջաններում, 48. 1 անգամ, գարուն-ամառ ժամանակահատվածում բանջարատնոցային մշակաբույսերի հանրապետական բերքատվության կանխատեսում, 49. 1 անգամ, գարնանը ծիրանի և դեղձի ծաղկման ժամկետների կանխատեսում 50. 1 անգամ, գարնանը ծիրանի միջին բերքատվության կանխատեսում, 51. 1 անգամ, գարնանը Արարատյան դաշտում խաղողի ծաղկման ժամկետների կանխատեսում 52. 1 անգամ ամռան ժամանակահատվածում լեռնային խոտհարքներում խոտի համախառն բերքատվության կանխատեսում, 53. 2-3 անգամ, ամռանը գարնանացան գարու միջին հանրապետական բերքատվության կանխատեսում ըստ զարգացման փուլերի</p>	
--	---	---	--

		<p>կայան</p> <ul style="list-style-type: none"> • 3-5 անգամ (հացահատիկ) բույսերի խտության որոշում /1 քառ.մ վրա/, 21 կայան • 10 օրը մեկ անգամ բույսերի վիճակի և դաշտի մոլախոտային աղտոտվածության որոշում 33 կայան • տարին 3 անգամ բերքատվության տարրերի որոշում, (հացահատիկ) 11 կայան • տարին 1 անգամ բերքի կառուցվածքի որոշում, (հացահատիկ,խաղող) 28 կայան <ul style="list-style-type: none"> • 1 ամսվա ընթացքում, 2 օրը մեկ անգամ ջերմասեր մշակաբույսերի հողի վարելաշերտի ջերմաստիճանի որոշում 11 կայան • 1 ամսվա ընթացքում, 2 օրը մեկ անգամ հողի կեղևակալվածության որոշում, 20 կայան • երկույթի առկայության դեպքում մշակաբույսերի վնասվածության որոշում պայմանավորված օդերևութաբանական անբարենպաստ պայմանների ազդեցությամբ • արածեցման սեզոնում, 10 օրը մեկ անգամ արոտավայրերում խոտածածկի և հողի վերին շերտի պայմանների որոշում, 7 կայան • 1 անգամ գարնանը ծաղկման ժամա նակաշրջանում պտղատուների վիճակի հետազոտություն, 30 կայան Բ. ՈՉ ՎԵԳԵՏԱՑԻՈՆ ՇՐՋԱՆՈՒՄ • 2 անգամ՝ հունվարին և փետրվարին աշնանացան ցորենի և ցանովի խոտաբույսերի կենսունակության որոշում, 11 կայան • -18օC ցածր ջերմաստիճանների դեպքում՝ անմիջապես, մարտ ամսին՝ պարտադիր կարգով պտղատուների ճյուղերի կենսունակության որոշում, 30 կայան • ձմռան ընթացքում, աշնանացան ցորենի թփակված հանգույցի ջերմաստիճանի որոշում, 1 կայան <p>ձմռան ընթացքում, զույգ օրերին հողի սառածության խորության որոշում, 1 կայան</p> <p>22. Հիդրոլոգիական ռեժիմային ուսումնասիրությունների իրականացում 74 գետային, 2 ջրանցքների /Արփա- Սևան ջրատար, Հրազդան հիդրոէլեկտրակայանի ջրանցք/ 5 ջրամբարի (Արփա լճի, Ախուրյանի, Ապարանի, Մարմարիկի, Ազատի) և 4 լճային /Սևանա լճի/ դիտակետերում, ընդ որում Արաքս-Սուրմալու, Ախուրյան-Հայկաձոր և Ախուրյան-Բազարան հիդրոլոգիական դիտակետերում Թուրքիայի հանր. մասնագետների հետ համատեղ ջրաչափական աշխատանքների կատարում՝ Ա. Գետերում՝</p> <ul style="list-style-type: none"> • վարարման շրջանում ամսական 3-4 անգամ, մյուս ամիսներին՝ 1-2 անգամ ջրի ելքը (ծախսը) • յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ ջրի մակարդակը • յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ ջրի և օդի ջերմաստիճանը • յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ սառցային երևույթները (երկույթի առկայության դեպքում) • ջրային մակերևույթից գոլորշացման դիտարկումներ 7 օդերևութաբանական կայաններում • յուրաքանչյուր 12 ժամը մեկ անգամ, Սևանա լճի 4 դիտակետերում (Սևան թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, 	<p>54. 1 անգամ, գարնանը հողի խոնավության պաշարների կանխատեսում վեգետացիայի վերսկսման պահին՝ ըստ գոտիների, 0-10 սմ, 0-20 սմ, 0-50 սմ հողաշերտերում</p> <p>55. յուրաքանչյուր տասնօրյակ տասնօրյակային ագրոտեղեկագրերի կազմում</p> <p>56. ձմռան ընթացքում բույսերի ձմեռային հանգստի շրջանի ագրոտեղեկաբանական ամսական տեղեկագրերի կազմում</p> <p>57. մշտապես, շարունակական ամսական, սեզոնային և տարեկան բնութագրերի վերլուծություն (միջին ջերմաստիճան, տեղումների քանակ և դրանց շեղումը նորմայից),</p> <p>58. մշտապես, շարունակական տեղումների և ջերմաստիճանի նորմերի վերահաշվարկ, ընդգրկելով նախորդ տարվա դիտարկումների տվյալները.</p> <p>59. 2024թ. Հայաստանի տարածքում երաշտի գնահատում SPI, NDVI, MVCI ,VCI վեգետացիոն և կլիմայական ինդեքսների կիրառմամբ,</p> <p>60. մշտապես, շարունակական ՀՀ տարածքում երաշտային պայմանների տասնօրյակային, ամսական և սեզոնային մոնիթորինգի իրականացում. օգտագործելով նաև բուսականության աճի մոնիթորինգի արբանյակային տեղեկատվությունը.</p> <p>61. մշտապես, շարունակական Հայաստանի տարածաշրջանում կլիմայական էքստրեմումների ինդեքսների (RCLIMDEX) հաշվարկ, արդյունքների տրամադրում շահառուներին,</p> <p>62. մշտապես, շարունակական ՀՀ տարածքում տաք և ցուրտ ալիքների գնահատում,</p> <p>63. մշտապես, շարունակական ՀՀ տարածքում և առանձին կլիմայական գոտիներում՝ ջերմաստիճանի և տեղումների տարեկան սեզոնային կտրվածքով՝ փոփոխությունների սպասվող սցենարները ըստ գլոբալ և տարածաշրջանային մոդելների,</p> <p>64. Բարելավել WRF մոդելի արդյունքները միկրոֆիզիկական և կոնվեկցիոն պրոցեսների համապատասխան պարամետրիզացիաների (Kain Fritsha (KF), Grell (3D), Betsa Millera-Yanicha (BMJ), Zang MakFarlan (ZM)) փաթեթների փորձարկմամբ բարձրացնելու ջերմաստիճանի, ճնշման դաշտի, տեղումների և վտանգավոր օդերևութաբանական երևույթների կանխատեսման ճշգրտությունը /շարունակական/,</p> <p>65. մշտապես, շարունակական WRF մոդելի կիրառություն վտանգավոր երևույթների հետազոտությունների և կանխատեսումների հարցերում օգտագործելով տարբեր գլոբալ մոդելների արդյունքները, որպես սկզբնական և եզրային պայմաններ,</p> <p>66. տարվա ընթացքում CPT ծրագրային փաթեթի կիրառություն գնահատելու գլոբալ շրջանառության պրոցեսների և տեղական շրջանառության վիճակագրական կապերը</p> <p>67. տարվա ընթացքում Հայաստանի տարածքի ցրտահարության ժամկետների քարտեզագրում ըստ գոտիների</p> <p>68. տարվա ընթացքում մշակել տարբեր բիզնես ծրագրերում հիդրոդերևութաբանական տեղեկատվության անհրաժեշտության, սպասարկման, մասնագիտական</p>	
--	--	---	---	--

